ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն _____

«01» 09 _____2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոռու մարզ բ. Վանաձոր

Մարզ համայնք

Ս. Զորյանի անվան № 22 հիմնական դպրոցի 6-րդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Լիանա Վահանի Ավագյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

6-րդ դասարանում սովորում է 21 աշակերտ՝ 9 տղա, 12 աղջիկ: Դասարանում ձևավորված է համերաշխ մթնոլորտ: Նրանք հարգալից են դասընկերների նկատմամբ, օգնում են միմյանց անհրաժեշտության դեպքում: Արման Բայադյանի հետ տարվում են ամենօրյա հատուկ աշխատանքներ՝ ուսումնառության գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Անցյալ տարի դասարանում ունեցել ենք 4 գերազանց առաջադիմությամբ աշակերտ, որոնք ստացել են իրենց պատվոգրերը;

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2023-2004 ուստարվա ընթացքում նախատեսվում են դասղեկի ժամերին մտքով շրջագայել աշխարհի շատ ու հետաքրքիր երկրներով՝ տեղեկություններ իմանալով դրանց մասին:

Ստեղծել բարեխիղճ վերաբերմունք ուսման և աշխատանքի նկատմամբ: Երեխաների մեջ դաստիարակել պարտաճանաչություն և ազնվություն: Դասարանում ստեղծել փոխադարձ հարգանք, փոխըմբռնման մթնոլորտ: Դաստիարակել հարգանք միմյանց նկատմամբ, ճանաչել և պահպանել շրջակա միջավայրը: Հետևել դասարանի սանիտարական վիճակին, երեխաների հիգիենային, կատարել դասալսումներ, կազմակերպել միջոցառումներ և էքսկուրսիաներ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1. Հոգևոր դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության տարածման նկատմամբ: Կատարել պատմական ակնարկ, պատմել քրիստոնեության ընդունման և տարածման մասին: Դաստիարակել հոգեպես մաքուր անձնավորություն, չխաբել, լինել ազնիվ, աշխատասեր: Ուսուցանել «Բարի լուր է» երգը, « Հայր Մեր» աղոթքը և պատվիրանները: Ծանոթացնել եկեղեցական տոներին: Այցելություն եկեղեցի, մանակցել պատարագին: Զրույց « Պահպանել հոգևոր արժանիքները»:

3.2. Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտներին հաղորդակից դարձնել գիտության, մշակույթի նվաճումներին և արվեստին վերաբերող թեմաների միջոցով նրանց մեջ ձևավորել գեղագիտական դաստիարակություն: Կազմակերպել էքսկուրսիաներ՝ եղանակային փոփոխությունները զգալու նպատակով, նկարչություն բաց երկնքի տակ: Զրույց՝ « Իմ քաղաք Վանաձորի օր »թեմայով:

Առօրյա կյանքում՝ տարբեր իրավիճակներում, հարգել և աջակցել ընտանիքի անդամներին, մեծահասակներին:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Անցկացնել զրույց «Արցախյան հայրենական պատերազմ» և « Իմ անկախ հայրենիքը» թեմաներով: Ծանոթանալ հայ ազգի ներկա և նախկին հերոսների մասին; Դաստիարակել հայրենասեր, ազգի նվիրյալ որդիներ: Սովորեցնել հայրենասիրական երգեր և բանաստեղծություններ:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն

«Առողջ մարմնում առողջ հոգի կարգախոսը» ուղղորդում է ֆիզիակկան դաստիարակության հարցում: Աշակերտը պետք է զգալի ժամանակ հատկացնի մարզումներին,տարբեր սպորտային խաղերին:

Զրույց «Սպորտը մեր կյանքում», բացօթյա ֆիզկուլտ-պարապմունքների անցկացում; Կազմակերպել էստաֆետային խաղեր:

3.5. Աշխատանքային դաստիարակություն

Քննարկել «Ամեն ինչ ստեղծվում է աշխատանքով», «Ես երազում են լինել...», «Լինել պիտանի մարդ» թեմաները և լսել աշակերտների կարծիքները: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը; Հետևել և մասնակից դարձնել դասասենյակի մաքրությանը, ինչպես նաև պահպանել շրջակա միջավայրը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Զրույց «Պահպանել բնությունը» թեմայով: Ընթերցել նյութեր բնության պահպանման վերաբերյալ, երեխաներին մասնակից դարձնել ծառատնկման աշխատանքներին, սովորեցնել մաքուր պահել շրջակա միջավայրը: Սերմանել սեր և հոգատար վերաբերմունք հուշարձանների, աղբյուրների նկատմամբ

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Կազմակերպել հանդիպումներ այն մարդկանց հետ, ովքեր դրական ազդեցություն ունեն երեխայի վրա, անցկացնել ծնողական ժողովներ: Ծնողներին հորդորել ամրապնդել երեխաների ձեռք բերած նոր հիգիենիկ վարքագիծը տանը գտնվելու ընթացքում: Ծնողներն իրականացնում են ծնող-ուսուցիչ համակարգված հաղորդակցություն և աջակցում առողջ և ապահով դպրոցի պահպանմանը: Ծնողի հետ սերտ կապի միջոցով ուսումնադաստիարակչական աշխատանքները դարձնել ընդհանուր, ծնողին մասնակից դարձնել ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

XXI շաբաթ	Զրույց՝ «Հովի. Թումանյանի և նրա ստեղծագործությունների շուրջ»: «Ինչ են սովորեցնում մեզ Հովի . Թումանյանի հեքիաթները»:		
XXII շաբաթ	Մայրենիի օր: Զրույց « Գիրքը կյանքի լավ ուղեկից » թեմայով:		
XXIII շաբաթ	Փողոցային երթևեկության կանոնների քննարկում: Երեխաների ճիշտ պահվածքը փողոցում և տրանսպորտում:		
XXIV շաբաթ	Ընտանիքի անդամների նկատմամբ ջերմ վերաբերմունքի կարևորությունը: Զրույց՝ «Մայր իմ անուշ ու անգին»:		
XXV շաբաթ	Զրույց « Ինչո՞վ է գեղեցիկ աշխարհը»:		
XXVI շաբաթ	Բնության զարթոնքի ընկալում: Դաստիարակել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:		
XXVII շաբաթ	Դաստիարակել սեր ու հարգանք մայրիկների, տատիկների, քույրիկների հանդեպ:Շնորհավորանքի կարողությունների զարգացում:		
XXVIII շաբաթ	Եկեղեցական տոներ: « Զատիկ»: Աղանդների վնասակարությունը:		
XXIX շաբաթ	Զրույց՝ « Մեծ Եղեռն »: Պատմել հայ ժողովրդի հերոսական պայքարի մասին:		
XXX շաբաթ	Զրույց՝ «Հարգանք աշխատավոր մարդու նկատմամբ» թեմայով:Աշխատանքի դերը:		
XXXI շաբաթ	Ընթերցանության կարևորում: Հայ գրողներ: Առակի քննարկում:		
XXXII շաբաթ	Հայաստանը որպես կայացած պետություն՝ դրոշ, զինանշան, հիմն, ազգային բանակ:		
XXXIII շաբաթ	Զրույց՝ «Ինչ է ինձ համար դպրոցը»: «Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին»:		
XXXIV շաբաթ	Քննարկում՝« Վերջին զանգի խորհուրդը»:		